

**ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2019 թվականի  
դեկտեմբերի 3-ին կայացած Գիտական Խորհրդի N4 նիստի**

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 35-ը (ցուցակը կցվում է), նիստին մասնակցում էր նաև ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար պրն. Գ.Գևորգյանը ու ճշգրիտ և բնագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր պրն. Ռ.Բարխուդարյանը

**Օրակարգ**

1. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը 2019-2020 ուս.տարում կատարած աշխատանքների վերաբերյալ

/զեկ. Մ.Ա.Գրիգորյան/

Նիստը դեկավարելու համար առաջարկվեց դոց.Ս.Ռ.Սուվարյանի թեկնածությունը:

Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

Ս.Սուվարյանն առաջարկեց սահմանել աշխատակարգ՝ հաշվետվությունը ներկայացնելու համար հատկացնել 15 րոպե, իսկ ելույթների համար՝ 5 րոպե:

Առաջարկությունն ընդունվեց միաձայն

**ԼՍԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաշվետվությունը մեկ տարում կատարած աշխատանքի վերաբերյալ (զեկուցումը կցվում է):

Հաշվետվությունն ավարտելուց հետո դեկան **Մ.Գրիգորյանը** պատասխանեց տրված հարցերին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Ս.Հայրոյանը.** Ելույթի սկզբում ներկայացրեց ամբիոնում առկա խնդիրները: Ամբիոնի վարիչն իր անհանգստությունը հայտնեց Երկրաբանություն մասնագիտության շրջանավարտների որակի իջեցման վերաբերյալ, ինչն, իր համոզմամբ, մասնագիտացումների միավորման արդյունք է: Ս.Հայրոյանը խոսեց նաև

ուսանողների թվի հետ կապված առաջացած խնդիրներից: Ելույթում Ս.Հայրոյանը առանձնահատուկ ընդգծեց, որ մինչ օրս թե ֆակուլտետի և թե ամբիոնի կողմից դեկանին ներկայացրած ցանկացած խնդիր ստացել է իր տրամաբանական լուծումը: Ելույթի ավարտին Ս.Հայրոյանն առաջարկեց դեկանի կատարած աշխատանքն արժանիորեն գնահատել «բավարար»

- Մենք խնդիրներ չունենք, քանի մեր ֆակուլտետը ղեկավարում է Մ.Գրիգորյանը,-հավելեց Հայրոյանը:

**Պ.Գ.Դավթյան.** Առաջարկեց դեկանի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»: Մ.Գրիգորյանի ղեկավարումը անհրաժեշտություն էմ համարում,- ասաց Պ.Դավթյանը: Նա բարձր գնահատեց Մ.Գրիգորյանի ղեկավարելու ձիրքը և գիտական պոտենցիալը: Խոսեց ամբիոնում փակված <Գեոմորֆոլոգիա> մասնագիտացման վերաբացման համար քայլեր ձեռնարկելու մասին, ինչպես նաև “Քարտեզագրություն և կադաստրային գործ” մասնագիտության համար առանձին մասնագիտական շիֆր կազմակերպելու վերաբերյալ:

- Շիֆրի բացակայությունը և Աշխարհագրության շիֆրի տակ ներկայանալը չի խթանում Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտության զարգացմանը,- ասաց Պ.Դավթյանը՝ դիմելով ռեկտորին հնարավորության դեպքում կազմակերպել շիֆրի տրամադրումը:

**Թ.Գ.Վարդանյան.** Հակիրճ ներկայացրեց մտորումները: Ելույթում նա խոսեց, որ ֆակուլտետում դրական տեղաշարժ չկա, քանի որ 30 տարի նույն բանն է լսում: Ֆակուլտետում վերջին մի քանի տարիների ընթացքում սկսել է դեգրադացիայի գործընթաց, որը գնալով խորանում է բոլոր ոլորտներում: Անկախ ներկայացրած դրական հաշվետվությանը իրականությունն այլ է և իր համար մտահոգիչ: Ֆակուլտետում զարգացում չի նկատվում և մեղքի ամենամեծ բաժինը ֆակուլտետի ղեկավարինն է: Ֆակուլտետում առկա միջավայրը հնարավորություն չի տալիս կրթության և գիտության ոլորտում դրական փոփոխություններն իրագործելու: Ֆակուլտետում կառավարումն իրականացվում է սխալ՝ ոչ թե ի օգուտ գիտության այլ անձնական շահերից ելնելով: Դժգոհեց, որ բոլորը դարձել են ջրաբան, իսկ իրական ջրաբանները դուրս են մնացել:

- Դեկանի մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատում եմ «ոչ բավարար», - ասաց Թ.Վարդանյանը:

**Շ.Վ.Խաչատրյան.** – Թե՛ Մ.Գրիգորյանի և թե՛ Թ.Վարդանյանի բարձրաձայնած հարցերն, ըստ էության, տարբեր են: Պետք է գնահատել նաև այն ամբողջ դրականը, որը կա ֆակուլտետում: Խնդիրները պետք է բարձրաձայնել, որպեսզի դրանք ստանան լուծումներ: Բամբաստելով և «պատերի տակ» խոսելով գիտությունն ու կրթությունը զարգացնել չի լինի, - ասաց Շ.Խաչատրյանը: Կոչ արեց միասնաբար լուծել գոյություն ունեցող խնդիրները, քանի որ դրանք պահանջում են թիմային լուծումներ:

- Մ.Գրիգորյանի կատարած աշխատանքը գնահատում եմ «բավարար» քանի որ դա նաև իմ աշխատանքն է, - ասաց նա:

**Ս.Ս.Քեյյան** – Շնորհակալություն հայտնեց ռեկտորի պատրաստակամությանը ֆակուլտետում առաջացած ցանկացած խնդրի՝ մասնավորապես պրակտիկաների հետ կապված հարցերի լուծմանն ընդառաջելուն: Ս.Քեյյանը ֆակուլտետում դեկանի կատարած աշխատանքը որակեց ուսանողակենտրոն:

- Այն հսկայական ծավալի կատարած աշխատանքը, որն իրականացվել և իրականացվում է չգնահատելը մեղմ ասած ՃԻՇՏ ԵՎ ԱՐԴԱՐ ՉԷ: Ինչ վերաբերում է Թ.Վարդանյանի հայտնած կարծիքին, համոզված եմ, որ դա միայն նրա սուբյեկտիվ կարծիքն է, և ՏԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ չի գտնվի որևէ մեկը ով կկիսի այդ կարծիքը: Մ.Գրիգորյանի կատարած աշխատանքը գնահատում եմ «բավարար», - ասաց Ս.Քեյյանը:

**Վ.Պ.Վարդանյան.** Առաջարկեց դեկանի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»: Պրոֆ.Վ.Վարդանյանը նշեց, որ ներկայացված հաշվետվությունն իր մեջ ներառել է ֆակուլտետում կատարած հսկայածավալ աշխատանքի միայն որոշ հատված: Ստեղծված են նորմալ պայմաններ թե՛ գիտական, և թե՛ ուսումնական գործընթացներն ապահովելու համար: Նա անդրադարձավ Թ.Վարդանյանի հնչեցրած «բացասական կարծիք»-ին և հորդորեց չընդհանրացնել Թ.Վարդանյանի սեփական «ոչ անշահախնդիր» կարծիքը և առաջարկեց որպեսզի Թ.Վարդանյանն իր իսկ ձախողումները փնտրի իր մեջ:

- Ցանկացած առաջարկած ծրագիր ստացել է իր լուծումը, ցանկացած առաջարկված գիտական միտք՝ ի կատար է ածվել: Խնդիրն այստեղ այլ է և պարոն Վարդանյանը թող փնտրի այն իր մեջ,- կրկին անգամ շեշտեց պրոֆ.Վ.Վարդանյանը:

**Վ.Վ Գրիգորյան** – Ելույթը սկսեց “որտեղ աշխատանք, այնտեղ բացթողում” արտահայտությամբ:

- Անհնար է, որ յուրաքանչյուր մարդ իր աշխատանքային գործունեության ընթացքում թույլ տված չլինի որևէ վրիպում: Բայց այդ վրիպումները էական չեն ու շեշտադրել և որակել դա որպես դեգրադացիա, մեղմ ասած անթույլատրելի և սխալ է, - ասաց Վ.Գրիգորյանը: Նա կոչ արեց գործընկերներին զգուշորեն արտահայտվելու:
- Կոչ եմ անում իմ գործընկերներին աշխատել ա՛ն-շա՛հա՛-խը՛ն-դի՛ք, ԿՐԿՆՈՒՄ ԵՄ, անշահախնդիր,- շեշտակի ասաց նա:
- Ֆակուլտետում փոփոխություններն ակնառու են, այն էլ, պրն. Թ.Վարդանյան՝ դրական ուղղությամբ: Առաջարկում եմ դեկանի կատարած աշխատանքը գնահատել «բավարար» - ասաց Վ.Գրիգորյանը:

**Ս.Ս.Սարգսյան** - Առաջարկեց դեկանի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»

**Ս.Թ.Գրիգորյան.** – ԵՊՀ-ում աշխատելով 1971 թվականից շուրջ 30 տարի ճանաչելով Մ.Գրիգորյանին հերթական անգամ համոզվում եմ, որ Մ.Գրիգորյանը նվիրված է իր աշխատանքին: Մ.Ա.Գրիգորյանը ղեկավարում է մոտ 1300 հոգանոց կոլեկտիվը: Սխալված չեմ լինի եթե ասեմ, որ ամենաանկեղծ և օբյեկտիվ գնահատականը ուսանողի գնահատականն է: Եվ Մ.Գրիգորյանը որպես ղեկավար այդ արդյուքներով ունի 4,89 միավոր, մինչդեռ ամենացածր սոց.հարցման գնահատականը՝ 3.28-ը Թ.Վարդանյանինն է: Ջրաբանության բաժինը փակվել է, քանի որ ուսանողների ՄՈԳ-ը 13-ը չի գերազանցել, ոչվ է եղել մեղավորը, եթե ոչ ամբիոնի վարիչը, իսկ ամբիոնի վարիչ է եղել Թ.Վարդանյանը: Բնագիտական կոնցեպցիաներ կամընտրական առարկան ոչ մի ուսանող չընտրեց տեղեկանալով որ դասավանդելու է Թ.Վարդանյանը: Մեր ուսանողները 100ավոր անգամ արտահայտել են իրենց կարծիքը և բարձրաձայնել ուսանողների խնդիրները լուծելու Մ.Ա.Գրիգորյանի կարողությունը: Նա կարողանում է կենտրոնաձիգ ուժը, այդ է պատճառը, որ չափազանց հեշտ է աշխատել և միևնույն ժամանակ շատ դժվար:

Գնահատելով արժանիքներն ու կատարված դրական աշխատանքը՝ առաջարկում եմ գնահատել «բավարար»:

**ՈւԳԸ նախագահ Ա.Հակոբյան.** – կփորձեմ Դեկանի կատարած աշխատանքը գնահատել ուսանողի աչքերով: Մեր ֆակուլտետում դրված խնդիրները ուժերի ներածին չափով կատարվում են: Շրջանավարտները աշխատաշուկայում զբաղեցնում են բարձր հորիզոնականներ ինչը խոսում է, որ ֆակուլտետն իր գործունեությունը լավ է կատարում: Ֆակուլտետում կատարած աշխատանքը նույնացրեց թիմային աշխատանքի հետ և գնահատում եմ «բարձր»: Դեկանն ունի ուսնողին լսելու և աջակցելու պատրաստականություն:

**Ս.Ռ.Սուվարյան.** Բավականին շատ խնդիրներ կան և այդ խնդիրների պատճառահետևանքային կապի վերլուծությունը յուրաքանչյուրիս գործն է և ամեն մեկն անում է յուրովի: Ես դեմ լինելով ֆակուլտետների միավորմանը՝ դեմ էի Մարատ Արիսի ղեկավարմանը, սակայն փորձը ցույց տվեց որ միավորումը և Մ.Գրիգորյանի ընտրությունը ճիշտ էր, առաջին հերթին քանի որ աշխատանքային կոլեկտիվի միջավայրը մաքրվեց տարատեսակ հիվանդագին բացիլներից: Այսօր կոլեկտիվը՝ կոլեկտիվ է: Դեկանի կատարած աշխատանքը գնահատում ենք որպես կազմակերպիչ, առաջնորդ, իր սեփական օրինակով: Դեկանից պահանջվում է ուսումնական, գիտական և կրթական աշխատանքի կազմակերպում եղած ռեսուրսներով, եղած կանոնակարգով, եղած պահանջներին համապատասխան, ինչը և իրականացնում է Մ.Գրիգորյանը: Եկեք գնահատենք դեկանի ֆունկցիաները, թե որքանո՞ւ է իրականացվում դրանք: Չեմ ուզում անդրադառնալ “բողոքի” երանգ ունեցող ելույթին, սակայն կցանկանայի հիշեցնել, որ մարդ կար, որ ամեն նիստին առաջին ելույթ ունեցողն էր, այդքան չի կարելի փոխվել, գլխապտույտ և սրտխառնոց է առաջացնում: Ուզում եմ հասկանալ նաև նման մարդկանց՝ մտնելով նրաց վիճակի մեջ: Դեկանը ղեկավարում է ֆակուլտետի կոլեկտիվը, հետևում է կարգապահությանը, օժանդակում է նախաձեռնությանը: Բնական է, որ կարող են լինել կարծիքների տարբերություններ, սակայն պետք է կարողանալ աշխատել: Այն հոգեբանությունը, որ «այն ինչ ինձ օգուտ չէ՝ նշանակում է սխալ է» - դա ճիշտ չէ: Հեշտ է խոցել և վիրավորել մարդու անձը, շատ ավելի դժվար է խոսել մարդու կատարած աշխատանքների վերաբերյալ: Դեկանի

կատարած աշխատանքը գնահատելուց պետք է հիշենք բարոյահոգեբանական վիճակը աշխարհագրության ֆակուլտետում՝ նախքան ֆակուլտետների միավորումը և դրանից հետո, ինչպես նաև գտնել պատճառահետևանքային կապը: Ունենք օբյեկտիվ արդյունքներ և այս ամենը դեկան Մ.Գրիգորյանի աշխատանքի արդյունք է: Առաջարկում եմ դեկանի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

***Ելույթների ավարտից հետո ձայն խնդրեց Մ.Ա.Գրիգորյանը***

Մ.Գրիգորյանը նշեց, որ նախքան նիստի սկսելը Թ.Վարդանյանը մոտեցել է իրեն և խնդրել հիվանդ լինելու պատճառով չմասնակցել նիստին:

- Ես պնդեցի, որ Թ.Վարդանյանն անպատճառ մասնակցի: Թրահել Վարդանյանը, մինչև ամբիոնի վարիչի ընտրությունները, ներկա է եղել բոլոր նիստերին և իր ելույթներում բարձր է գնահատել ֆակուլտետում իմ կողմից կատարած աշխատանքը մինչ այն պահը, երբ Թ.Վարդանյանը ցանկացել է, որ ես աջակցեմ իրեն ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու հարցում և ստիպեմ մյուս թեկնածու Արսեն Գրիգորյանին հանելու իր թեկնածությունը, որպեսզի Թրահել Վարդանյանը մնա միակ թեկնածուն: Ինչին ես պատասխանել եմ, որ դա չեմ կարող անել: Ֆակուլտետի շատ աշխատակիցներ ինձ միշտ մեղադրում են, որ ես հովանավորում եմ գրագող Թրահել Վարդանյանին, դրանցից մեկն էլ պրն.Բոյնագրյանն է, - Այդպես է, պրն Բոյնագրյան:

Վ.Բոյնագրյան - Այո, ճիշտ է:

Թ.Վարդանյան – Դուք ինձ գրագոռ էք անվանում:

Մ.Գրիգորյան - Դա ԵՊՀ-ի ռեկտորի կողմից ստեղծված հանձնաժողովի եզրակացությունն է և ձեր կողմից ամբիոնի վարիչի մրցույթին մասնակցելու դիմումի վրա մակագրված ռեկտոր պրն. Ա.Սիմոնյանի գրառումն է՝ «Գրագողին չեմ թույլատրում մասնակցելու ընտրությանը»: Իմ աշխատանքի ընթացքում ձգտել եմ պահպանել ուղղամտություն և արդարամտություն:

***ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.*** դեկան Մ.Ա.Գրիգորյանի ներկայացրած հաշվետվությունն ընդունել և 2018/2019 ֆակուլտետում կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

***Քվեարկության արդյունքում՝ ԿՈՂՄ-33, ՁԵՌՆՊԱՀ -1, ԴԵՄ-1:***

***ՈՐՈՇԵՑԻՆ.*** դեկան Մ.Ա.Գրիգորյանի ներկայացված հաշվետվությունը և մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

Քվեարկության ավարտին ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Գևորգյանը  
դրական գնահատեց հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում դեկանի  
կատարած աշխատանքը և պատասխանեց բարձրացված հարցերին:

**Խորհրդի նախագահ**

**Մ.Ա.Գրիգորյան**

**Խորհրդի քարտուղար**

**Ե.Ս.Մանուկյան**